

ԱՆԱՐԱՆ ՄԱՌԵՍՏՐՈՍԻ ԱՐՁԱՆԱՔՐՈՒԹՅԱՆ (1055—1056) ՄԵՋ
ՀԻՇԱՏԱՆԱԿԱԾ ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ

Հ. Մ. ԲԱՐԹԵԼՅԱՆ

Անիում բյուզանդական տիրապետության ժամանակաշրջանից մեզ հասել են վիճաբանությունների արձանագրություն: Դրանցից մեկը հունարեն է, հովհաննես Մոնաստիրիոտեսի արձանագրությունը՝ գրված 1059 թվականին, իսկ Երկուսը հայերեն՝ մագիստրոս ու Արևելքի կատապան Բագարատի արձանագրությունը, գրված 1060 թվականին և Ահարոն մագիստրոսինը, որն բաց է. Բենեշիչի գրվել է 1055—1056 թվականների միջև, բյուզանդական Թեոդորա կայսրուհու ժամանակ:

Սույն հոդվածում մենք քննում ենք ահա այս վերջին արձանագրության մեջ հիշատակված հարկերը: Արձանագրությունը փորագրված է Անիի մայր տաճարի արևմտյան պատի վրա և հրատարակվել է բազմիցս: Նրա բովանդակությունն է.

«Կամար ողորմութեամբ բարերարին ԱՅ ևս Առաւնս մագիստրոսս մեծարեալ ի մեծափառ թագաւորութեանցն ի զեզ զարդու և ի տոն մանգութեան իմո և կի յԱրեւելս ի գեղեցկաշէն բերդս յԱնի բարձրացուցի բաւանդակ զպարիսպ յորին կառկառկոյտ արձանաւր և հաստահանոյս ամրութեամբ. և ի յիմոց մեծածախ գանձուց ածի ջանիւ ջուր յորդարոյս ի մէջ ամրոցիս յուրախութիւն և ի զովադումն ծարաւեաց: Բերի ոսկի՝ մատուցեսու զիւր ազատաւրեան զինքնուկալ ծիրանեծին քաղուհոյն վասն պախտից տանց Բագարատ և քաստակին զոր տաին ամ յամլ շափ ուրից լտեց. այլ և ի խաղու ի խաւնուրացս խալիանցի և զգիւտ երկուց լտեց զոր տայր մուրսիքն զայս ամե...»¹:

«Պախտ» բառը հայկական աղբյուրներում միայն այս արձանագրության մեջ է, որ հիշատակվում է:

Այս արձանագրությամբ զրազվող բոլոր հայազեւոյնները զալիս են այն ճիշտ եզրակացության, որ «վասն պախտից տանց քաղարիս և թաստակին» դարձվածքի տակ հասկացվում են հարկեր: Իսկ թե կոնկրետ ինչ հարկեր էին դրանք, ինչով էին վճարվում, կամ ում էին վճարվում, այդ մասին հայազեւոյններն արտահայտել են ամենատարբեր կարծիքներ: Թվում է, թե Երանց օգնության պետը է զար «չափ ութից լտեց» դարձվածքը, և իսկապես, հայազեւոյնները իրենց եզրակացությունները հիմնում են այդ «լտեց» բառի վրա: Նրանք միայն մի բանում լրիվ համաձայն են իրար, թե դրանք եղել են բնահարկ և վճարվել են մթերքով:

Հ. Մանանդյանը մանրամասն անդրադարձել է Ահարոն մագիստրոսի այս արձանագրության մեջ հիշատակված հարկերին: Նա գրում է. «Ենթական հարկի նշանակություն ունեցել է, րոտ երևույթին, նաև «պախտ» հարկը»²: Մի թիվ հետո դեն զցելով վերևում հիշած «րոտ երևույթին».

¹ В. Н. Бенешевич, Три анийские надписи XI века из эпохи византийского владычества, Петербург, 1921, էջ 2 (ընդգծումը մերն է—Հ. Բ.): Չգիտես ինչու, ուսումնասիրողները աչքաթող անելով Վ. Բենեշիչի այս աշխատությունը, ուր հեղինակը մանրակրկիտ հետադրամբ ցույց է տալիս Ահարոն մագիստրոսի արձանագրության ավելի սեղմ ու հավանական տարբերակներ, հենվում են հին հրատարակությունների վրա և սխալ թվագրում այս արձանագրությունը:

² Հ. Մանանդյան, Նյութեր հին Հայաստանի անտեսական կյանքի պատմության, ՀՊՖՀ Պետական Համալսարանի Գիտական Տեղեկագիր, 1928, № 4, էջ 59 (այս և հետագա բոլոր ընդգծումները մերն են—Հ. Բ.):

նա գրում է. «Միանգամայն պարզ և որոշ է, որ «պախտ տանցը» բնական հարկ էր, ինչպես և «թաստակը»¹ և որ «այս հարկը (իմա՝ «պախտ տանցը» և «թաստակը» — Հ. Բ.) տրվել է ոչ թե դրամով, այլ լիտրերով»²:

Հ. Մանանգյանը փորձում է նաև ցույց տալ, թե ով էր վճարում այդ հարկը: «Առաջին բանակը. — գրում է նա, — «շափ ութից լիտրը» վերաբերվում է անշուշտ, Բաղաբի ամեն մի տնից տրվող հիմնական հարկին»³:

Հ. Մանանգյանը փորձում է նաև ստուգաբանել Ահարոն մագիստրոսի արձանագրության «պախտ» բառը և աներկրայորեն պնդում է, որ դա հայերեն «բախտ» բառն է, պարթևերենից փոխ առնված, որ «հնդկա-իրանական լեզուներում նշանակում է ոչ միայն «բախտ, վիճակ, ճակատագիր», այլև «մաս, բաժին»⁴: Հ. Մանանգյանը եզրակացնում է. «Այս «պախտ» — քսառարկի պարթևերեն կամ պարսկերեն վերոհիշյալ նույն իմաստով է. որը կարող էր բացի իր սովորական նշանակություններից ունեցած լինել նաև բերքից վճարվող մասի կամ բնահարկի նշանակություն»⁵: Նա կարծում է, որ «պախտ տանցը» և շարիատը նույն բանն են՝:

Ինչ վերաբերում է «թաստակին», Հ. Մանանգյանի կարծիքով այն լրացուցիչ տուրք էր «հիմնական բնահարկի (իմա՝ «պախտ տանց» — Հ. Բ.) 1/4 չափով, որ ստանում էին, հավանորեն «մուխիրը» կամ թերևս նաև սվիլի բարձր կազմած իշխանավորները»⁶:

Նախքան հիշատակված հարկերի ինչ լինելը պարզելը, հենց այստեղ նշենք Հ. Մանանգյանի մի անանշտությունը: Ահարոն մագիստրոսի արձանագրության մեջ բոլորովին էլ ցույց չի տրված, թե «թաստակը» չափը երկու լիտր է: Այնտեղ շատ պարզ ասված է, որ «պախտ տանցի» և «թաստակի» ընդհանուր գումարը կազմում է ութ լիտր: Ինչ վերաբերում է արձանագրության մեջ հիշատակված երկու լիտրին, դա ոչ մի կապ չունի «թաստակի» հետ, դա ուրիշ հարկ է, որի վրա կանգ կառնենք ստորև: Այնպես որ Հ. Մանանգյանի մանրամասն բացատրությունները «պախտ տանցի» 1/4-ի չափով լրացուցիչ տուրք, հարկ լինելու մասին, սխալ են և անընդունելի:

Հ. Աճառյանը բոլորից զգույշ է մոտենում այդ տերմինների բացատրությանը: Նա բավարարվում է գրելով, «Պախտ. տան հարկ: Նորագյուտ բառ, որ մեկ անգամ գտնում եմ գործածված ԺԱ գարու մի արձանագրության մեջ»⁷:

Ս. Մալխասյանը փորձում է մի քիչ ընդարձակվել: Նա գրում է. «Պախտ տանց», շարիատի նման հարկ, որ սույն գլուխ վճարում էին Բեհլով ութ լիտր (յուղ?) քանակությամբ⁸, մի խոսքով կրկնում է Հ. Մանանգյանի եզրակացությունները:

Միջնադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների վերաբերյալ վերջերս գրված մենագրական աշխատություններում, Ահարոն մագիստրոսի արձանագրության մեջ հիշատակված հարկերը նորից մանրամասն հետազոտության նյութ են դառնում: Այսպես օրինակ, պատմական գիտությունների գոկտոր Ս. Պողոսյանը մեջ բերելով Ահարոն մագիստրոսի արձանագրությունը, իր մենագրության մեջ գտնում է, որ նրա տեղեկությունները «որոշակիորեն հատուկում են Սրբեմնեով Ղենտայի գանձման ձևի առկայությունը»⁹ Հայաստանում XI դարի երկրորդ կեսի սկզբներին, որ «Անի քաղաքի բնակիչների կողմից վճարված «թաստակ» և «պախտ» տուրքերը... վճարվել են Բնադրյունով, այն էլ կշռաչափով կամ ցորենաչափով»¹⁰:

¹ Հ. Մանանգյան, նշվ. աշխ., էջ 59:

² Նույն տեղում, ծանոթ. 2:

³ Նույն տեղում, էջ 62:

⁴ Նույն տեղում, էջ 59—60:

⁵ Նույն տեղում, էջ 60:

⁶ Նույն տեղում, էջ 62:

⁷ Նույն տեղում:

⁸ Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատ. Ե, էջ 781:

⁹ Ս. Մալխասյան, Հայերեն բացատրական բառարան, հատ. Գ, էջ 36:

¹⁰ Ս. Պողոսյան, Գյուղացիների ճորտացումը և գյուղացիական շարժումները Հայաստանում IX—XIII դարերում, Երևան, 1956, էջ 191, հմտ. էջ 221:

¹¹ Նույն տեղում, էջ 191—192:

Ս. Պողոսյանը գտնում է, որ «Արձանագրության մեջ (իմա՝ Ահարոն մագիստրոսի—Հ. Բ.) ասվում է, թե «պախտ» և «թաստակ» կոչված հարկերը գանձվել են Վրեբով՝ մեկը ութ լարի, իսկ մյուսը երկու լարի չափով»¹:

Պատմական դիտությունների ղեկավար Ս. Հակոբյանը 1957 թվականին լույս տեսած իր մենագրության մեջ մանրամասն անդրադառնում է Ահարոն մագիստրոսի արձանագրությանը՝ նրա կարծիքով սխալ է Հ. Մանանդյանը, երբ ենթադրում է, թե պախտը վճարել են գյուղացիները: Ինքը պնդում է, որ պախտը վճարում էին քաղաքի, և այն էլ այգեգործությամբ զբաղվող բնակիչները: «Այս դրույթը,—գրում է նա,—ասպարեցվում է նաև այլ վկայություններով: Հայտնի է, որ ներմուծվող գինիների և ոգելից խմիչքների վրա միջնադարյան քաղաքներում դրվում էր հատուկ մար: Երբ ոգելից խմիչքները վաճառվում էին խանութներում և շուկաներում, ապա վաճառողը վճարում էր վաճառման հարկ: Բայց ոգելից խմիչքները հարկի էին ենթարկվում մինչև վաճառելը, արտադրողը պարտավոր էր հարկ վճարել արտադրանքի համար: Այստեղից հեղինակը եզրակացնում է. «Ուրեմն պախտ հարկը լիտրներով վճարվող այն հարկն էր, որ արտադրողը տալիս էր խմիչքներից. մինչև շուկա դուրս բերելը»²:

Նախ և առաջ նշենք, որ «պախտը» շարիաթի պարսկերեն անունը չէ, ոչ էլ որևէ կապ ունի հայերեն կամ պարսկերեն «բախտ» բառի հետ, ինչպես ենթադրում էր Հ. Մանանդյանը: Դա բյուզանդիայում լայն տարածված տերմին էր (Παχτον կամ Παχτον) և ուներ հարկ, ռենտա նշանակություն: Եվ եթե «պախտ» բառը պարզապես նշանակում է հարկ, ռենտա, ապա չի կարելի պնդել, թե այն ստացվել է միայն քաղաքից, կամ միայն գյուղից, չի կարելի ասել, թե «պախտը» նշանակում է «տան հարկ»: Հարկը կարող էր գանձվել և՛ քաղաքից, և՛ գյուղից³: Դրա համար էլ Անիի արձանագրության մեջ գրված է ոչ թե պարզապես պախտ, այլ «պախտ տանց», ցույց է տրված, թե ինչից էր գանձվում հարկը (պախտը), այն է՝ «հարկ տներից»: Բացի դրանից, քանի որ դա հարկ է, չի կարելի ասել, թե ինչ դումարի էր հավասար, որովհետև հարկը կարող է տարբեր չափեր ունենալ, Անիում լինել ութ լիտր, մի այլ տեղ ավել կամ պակաս:

Անիի արձանագրության «պախտ տանցի» կողքին կա նաև «թաստակ» բառը, որ նույնպես հարկ էր: Քանի որ թաստակի կողքին չի նշված, թե դա ինչից գանձվող թաստակ է, այդ ցույց է տալիս, որ թաստակը կոնկրետ հարկի անուն էր, կոնկրետ հարկի տեսակ և ոչ թե ընդհանրապես հարկ: Ս. Հակոբյանը քննության առնելով հայերեն վիճագիր արձանագրություններում հինգ անգամ հանդիպող «թաստակ» բառը, նկատել է, որ այդ հարկը գանձվել է այն տների տերերից, որոնք պատկանել են արքունիքին կամ արքունի տան սերնդին, այնպես որ Անիի արձանագրության պախտ տանցը և թաստակը գնում էին բյուզանդական պետության գանձարանը, դրանք անեցիների կողմից բյուզանդական պետությանը վճարվող հարկեր էին:

¹ Անկասկած Ս. Պողոսյանին շփոթության մեջ է գցել Հ. Մանանդյանը: Իր աշխատության 226-րդ էջում Ս. Պողոսյանը գալիս է միանգամայն ճիշտ եզրակացության, որը սակայն հենց ինքը նույն տեղում մերժում է: Նա գրում է. «Մենք նշեցինք Մանանդյանի կարծիքը և համաձայնեցինք նրա հետ, որ «պախտը» հավասար է եղել ութ լիտրի, քեև, արձանագրության շաբաթափոխից ելնելով, կարելի է ենթադրել, որ «պախտն» ու «թաստակը» միասին են կազմել ութ լիտր, իսկ վերջում հիշատակված երկու լիտրը այլ տուրքի է վերաբերում: Բայց ավելի ճիշտ է Մանանդյանի բացատրությունը, և մենք նույնպես «պախտը» համարեցինք ութ լիտրանոց հարկը և «թաստակը» երկու լիտրանոց տուրքը»: Ինչ խոսք, որ իր՝ Ս. Պողոսյանի ենթադրությունն է ճիշտ և ոչ թե Հ. Մանանդյանի, որին նա միանում է:

² Ս. Հակոբյան, Հայ գյուղացիության պատմություն, հատ. Ա, Երևան, 1957, էջ 410—411:

³ Ահարոն մագիստրոսի արձանագրության «պախտ» միանգամայն ճիշտ թիվերն են բյուզանդական Παχτον-ից Վ. Բենեշևիչը դեռ 1921 թվականին:

⁴ Բյուզանդական խոշոր ֆեոդալ Եվստաթիոս Բոյիլասի կտակում (գրված 1039 թվականին) ցույց է տրված, որ իր գյուղերից մեկը՝ Տանձուտը տարեկան բերում էր ութսուն զահեկան «պախտ» (Παχτον), այնպես որ, ինչպես տեսնում ենք, պախտը ստացվում էր ոչ միայն քաղաքից, այլև գյուղերից: Բոյիլասի կտակը հրատարակել է Նույն Վ. Բենեշևիչը, տե՛ս В. Бенешевич, Завещание византийского боярина XI века, Журнал Министерства Народного Просвещения, 1907, май, Отдел классической филологии, էջ 219—231:

Այդ և հաստատում և այն փաստը, որ այդ հարկերի վերացման համար անհրաժեշտ է եղել թեոդորա թագուհու «գիր ազատութեան», որը կնքված էր ժողովի մատանեաւ այն և՛ տրվել է թագուհու խրիստովուլլի: Ինչ վերաբերում է մութասիրի վճարած երկու լիտր հարկին, ապա այն չէր գնում բյուզանդական պետության գանձարանը, այլ տրվում էր Անի բաղարի կառավարիչ Ահարոն մազիստրոսին: Այդ և պատճառը, որ թեոդորա թագուհու խրիստովուլլի մեջ այդ հարկի մասին խոսք չկա և հարկը վերացնողը, «խափանողը», ինչպես գրված է արձանագրության մեջ, ինքը Ահարոն մազիստրոսն է:

Ինչպես տեսանք, Ահարոն մազիստրոսի արձանագրության մեջ հիշատակված են այնպիսի միջոցառումներ, որոնք կենսական նշանակություն ունեին բոլոր անեցիների համար: Ամբողջ բաղարի պարիսպներն ամրացնելը և բնակիչներին ջուր մատակարարելը «յուրախութիւն և ի դովացումն ծարաւեաց» ինչ խոսք, որ ծառայում էին Անի բաղարի ողջ բնակչության շահերին: Եվ ահա, հանկարծ այդ երկուսի կողքին մենք կարգում ենք, որ բյուզանդական պետությունը վերացնում է ինչ-որ հարկ, որ կոչվում է «պախտ տանց և թաստակ», տարեկան ութ լիտրի չափով, որ քստ արձանագրության, վճարում էր պետությանը Անիի ամբողջ բնակչությունը (և ոչ թե տուն գլուխ), և երկու լիտր այլ հարկ, որ վճարում էր բաղարի մութասիրը Ահարոն մազիստրոսին: Մութասիրի վճարած հարկը արձանագրության մեջ կոչվում է «գիւտ» Ուսումնասիրողները դրա վրա ուշադրություն չեն դարձրել: Վ.Քենեշեիչը այն թարգմանել է «взыскание»: Բայց բանից պարզվում է, որ դա ինչ-որ հարկի անուն պետք է լինի, հարկ, որ վճարում էր միայն մութասիրը, այն էլ ոչ թե բյուզանդական պետությանը, այլ Ահարոն մազիստրոսին, Հայկազյան լեզվի բառարանում «գիւտ» բառի դիմաց բացի նրա ունեցած սովորական նշանակությունից բերված է նաև «շահ, օգուտ» իմաստը: Ահարոն մազիստրոսի արձանագրության մեջ հիշատակված «գիւտի» տակ գուցե ենթադրվում է մեզ գեղեւ անձանոթ հարկ, շահատուրք, հարկ շահույթից, որ գանձվում էր առևտրականներից: Այդ ենթադրության օգտին է խոսում նաև այդ հարկը հավաքողի և վճարողի պաշտոնը: Մութասիրը բաղարներում վարում էր ոստիկանապետի պաշտոն և հսկում էր շուկայի չափերի ու կշիռների վրա:

Արդ ինչ մեծ բան էր այդ ութ լիտր մթերքը, որ մեր չափերով կազմում է երեք կիլոգրամ 264 գրամ¹, որ տալիս էին անեցիները Բյուզանդիային, կամ երկու լիտր մթերքը, այն է 816 գրամը, որ տալիս էր բաղարի մութասիրը Ահարոն մազիստրոսին «ամ յամէ», լինելը դա յուր, ինչպես կարծում է Ս. Մալխասյանցը, զինի, ողելից խմիչը, ինչպես ենթադրում է Ս. Հակոբյանը, և կամ ընդհանրապես այլ բնամթերք, ինչպես անորոշ կերպով եզրակացնում են միացած բոլոր հայագետները: Կարող էր այդ հարկը մտահոգել ամբողջ բաղարը, հասցնել այն բանին, որ Անի բաղարի իշխանավորները հատուկ դիմեին Ահարոն մազիստրոսին, որպես ի նա վերացնի մութասիրի վճարած երկու լիտր, այն և՛ 816 գրամ «բնամթերք» և անեցիների վճարած այդ ութ լիտր հարկի վերացմամբ զրազվել է ամբողջ բյուզանդական պետությունը, և թեոդորա թագուհին ոսկե կնիքով կնքված հատուկ գրություն է ուղարկել Անի, որով հայտնել է, թե ինքը անեցիների վճարած ութ լիտր հարկը վերացնում է: Այդ բոլորը բիշ լինելով, Ահարոն մազիստրոսը այդ բանը հռչակում է պաշտոնական բնույթի հատուկ արձանագրությամբ, փորագրել տալով այն Անիի մայր տաճարի արևմտյան՝ դիսավոր ճակատի պատի վրա, մուտքի կողքին:

Այսպիսով հանգում ենք այն եզրակացության, որ Ահարոն մազիստրոսի արձանագրության մեջ խոսքը ութ լիտր կամ երկու լիտր բնահարկի, ութ կամ երկու լիտր յուրի կամ գինու մասին չէ, այլ ավելի լուրջ բանի մասին, որ իսկապես դարձել է մի կողմից անեցիների և մյուս կողմից բյուզանդական արքունիքի ու կառավարչի մտահոգության առարկան:

Պախտ և թաստակ բառերի մեջ բնահարկ տեսնելու հայագետների սխալը անկասկած ընկած է լիտր բառի ոչ ճիշտ մեկնարանությունից: Այդտեղից է գալիս նաև նրանց այն սխալը, որ մինչդեռ Անիի արձանագրության մեջ պարզ առված է, որ անեցիներն ամբողջությամբ վերցրած վճարում էին տարեկան ութ լիտր հարկ, իսկ մութասիրը նույնպես տարեկան երկու լիտր հարկ, նրանք այդ բնահարկ համարելով և ամբողջ բաղարի համար այդ քանակը ծիծաղելի նկատելով, ենթադրում են, թե այդ ութ լիտրը վճարում էր անեցիների յուրաքանչյուր տունը՝ «տուն գլուխ», ինչպես գրում էր Ս. Մալխասյանցը:

Հարցը լուծվում է, երբ արձանագրության իմաստը ճիշտ է հասկացվում:

¹ Մեկ լիտրը հավասար է 408 գրամի: Տե՛ս Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն, Նշվ. աշխ., էջ 39:

Անիի արձանագրության մեջ լիար բառը զործածված է ոչ թե որպես հեղուկ կամ հատիկա-
յին մարմինների ծանրության չափ, այլ ունի միանգամայն ուրիշ նշանակություն, որ յուրա-
քանչյուր բյուզանդական աղբյուրի մեջ կարելի է հանդիպել: Անիի արձանագրության լիար
բառի տակ պետք է հասկանալ լիար ոսկի¹, իսկ մեկ լիար ոսկին հավասար էր 72 ոսկեդրամի,
դահեկանի: Բյուզանդական սկզբնաղբյուրներում հանդիպում է այսպիսի արտահայտություն.
«նա սպրեց մեկ լիար տարի», այդ նշանակում է, որ նա սպրեց 72 տարի:

Այս բոլորից հետո հասկանալի է, որ Ահարոն մագիստրոսի արձանագրության ութ լիար
«պախտ տանց և թաստակը» հավասար էր 576 ոսկեդրամի, որ որպես տնային հարկ («պախտ
տանց») և, ըստ երևույթին, հողային ունեւոր («թաստակ») վճարում էր Անիի բնակչությունը
բյուզանդական պետությանը յուրաքանչյուր տարի: Այդ գումարը անորոշաբանական չէ.
եթե նկատի ունենանք, որ Եվստաթիոս Բուիլասի կոտակում, որը զբաղեցրել է 1059 թվականին,
այսինքն Ահարոն մագիստրոսի արձանագրությունից երեք-չորս տարի անց, հիշատակված
գյուղերից մեկը՝ Բուդինան տարեկան բերում էր հարյուր դահեկան պախտ Սաշու, այն է
ունեւոր, եկամուտ: Անիի նման մի մեծ քաղաք բնակաւորաւ կարող էր այդ գյուղից հնգասու-
սիկ և ավելի հարկ վճարել: Քաջի գրանից, Անի քաղաքի մոթասիրը Ահարոն մագիստրոսին էր
վճարում տարեկան երկու լիար ոսկի, այն է 144 ոսկեդրամ որպես «գիրտ» հարկ, առևտրական-
ներից գանձված շահատուրք:

Բյուզանդիան, որը տիրացել էր Անիին ոչ թե աննյութների ցանկությամբ, այլ զենքի ու
նենգության միջոցով, պարզ է, որ պետք է աշխատեր սիրաշահել մի կողմից քաղաքի բնակիչ-
ներին և մյուս կողմից նրա իշխանավորներին, քաղաքի ավագանուն: Քաղաքի պարիսպներն
ամրացնելը և քաղաքում ջրամատակարարման սխեման ուղղելը, ինչ խոսք, որ շոշափում էր
յուրաքանչյուր անեցու շահերը: Ըստ երևույթին այդ բավարար չհամարելով, իր տիրապետու-
թյունը Անիում ավելի ևս ամրապնդելու համար բյուզանդական պետությունը բնդառաջ գնա-
լով քաղաքի բնակիչների և իշխանավորների խնդիրներ, հրաժարվում է նաև այդ հարկերը գան-
ձելուց: Այլ հարց է իհարկե, թե մոթասիրը երկու լիար «գիրտ» այլևս չվճարելով Ահարոն
մագիստրոսին, դադարում էր այն գանձել քաղաքի առևտրականներից, թե՛ շարունակում էր
գանձել, բայց թողնում էր իր, կամ ավագանու մոտ՝ քաղաքի կարիքները բավարարելու համար.
այդ մեզ համար պարզ չէ:

Ավարտելով մեր այս փոքր ուսումնասիրությունը, բնդգծենք, որ Ահարոն մագիստրոսը լրիվ
իրավունք ուներ այդ «լիարների» մասին գրելու Անիի մայր եկեղեցու պատի վրա, քանի որ
դրանց մեջ քաղաքի բնակչության համար մեծ հետաքրքրություն ու կարևորություն ներկայա-
յնող հարցեր էին շոշափվում:

О НАЛОГАХ, УПОМЯНУТЫХ В НАДПИСИ МАГИСТРА ААРОНА (1055—1056)

Р. М. БАРТИКЯН

(Р е з ю м е)

Из эпохи византийского владычества в Армении до нас дошла надпись магистра
Аарона, высеченная на западной стене соборной церкви в Ани. В надписи говорится
о том, что магистр принес хрисовулл императрицы об отмене «пахт»-а с домов го-
рода и «тастак»-а, которые ежегодно в размере восьми литров платили анийцы, и о
том, что он отменил и «гют», который платил мутасиб города в размере двух литров.
Все арменоведы, изучавшие вышеупомянутые налоги (А. Манандян, Р. Ачарян, Ст.
Малхасян, С. Погосян, С. Акопян и др.), на основании слова «литр» приходят к вы-
воду, что эти налоги платились продуктами — маслом, вином и т. п. в размере восьми

¹ Հայկազյան լեզվի բառարանում «լիար» բառը այս իմաստով հիշատակված է երկու
անգամ, երկու դեպքում էլ հունարենից թարգմանված գրականության մեջ, Մեկ անգամ Հով-
հաննես Կլիմասի «Սանդուղր աստուածային երկից»-ի մեջ և երկրորդ անգամ Նսայի մարգարեի
մարգարեության Հովհան Ոսկերեանի մեկնության մեջ:

литров. Предполагая, что речь идет о налогах продуктами, арменоведы считали, что 8 литров платил каждый дом. Из надписи же видно, что налоги, уплачиваемые всеми анийцами ежегодно, составляли 8 литров.

Если это были налоги натурой, то совершенно немыслимо, чтобы весь город платил Византии 8 литров, т. е. 3 кг 264 грамма масла или вина, а мутасиб города всего 2 литра или 816 граммов того же продукта. Невероятным представляется также, что византийский двор, анийский правитель и городские власти могли заниматься вопросом налога такого ничтожного количества.

Под словом «литр» анийской надписи подразумевается литр золота, который равен 72 золотым монетам-номисмам, следовательно 8 литров — это 576 золотых монет, которые ежегодно как «пахт» *Παχτο* налог с домов, и «тастак» земельную ренту анийцы платили Византии, что в 1055—1056 гг. было отменено.

Что касается налога «гют», который ежегодно платил мутасиб, по всей вероятности, магистру Аарону в размере 2 литров, т. е. 144 золотых монет, то он, вероятно, взыскивался с торговцев города.